

7857

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿ



281.6  
n-81

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

1935

28/6  
12-91

04 NOV 2000

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՄԿՐՏԻԶ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԵՒ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲԻ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



1935

ՅՊԱՐԱՆ (ՍՐԱՐԱ) ԽԱՆՏԷՊ

ՀԱՂԷՊ (ՍՈՒՐԻԱ)



42-11222



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



65611-67



**ՄԿՐՏԻԶ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՆԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԶԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՐԵՇԱՐ ԱՐՈՒՈՑ՝ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԻ ԷԶՄԻԱՇԵՒԻ:**

Ողջո՛յն քեզ, Առաքելական Եկեղեցի Հայաստանեայց Թաղևորի և Բարթոլոմեոսի, և Գրիգորի, Աւետարանաւ ծնեալք ՚ի Բրիստոս, աճեալք և զարգացեալք հաւատով Աստուածապաշտութեան:

Ողջո՛յն քեզ, մայր Սիժն, լեառն Աստուծոյ Երուսաղէմ, եթէ ՚ի քեզ երեսցաւ լոյսն աշխարհի՝ մարմնացեալ Փրկիչն, նոյն Միածինն է՛ջ ՚ի Հօրէն եղ զհիմն Այրարատայ եկեղեցոյ լուսակերտեալ Ս. Էջմիածնի:

Ողջո՛յն քեզ, տուն Առաքելական աթոռ Յակովբեանց, ողջո՛յն համայն միաբանական ուխտին Հայոց, որ իբրև խաչակիր զինուոր տքնիք և պաշտէք ըզտնօրինական Ս. տեղիս, և ամենայն անձնուիրութեամբ պաշտպանէք զվիճակն Հայոց, զցանկալին և զնախանձելին ՚ի համայնից ազանց:

Ողջո՛յն ձեզ, Կաթողիկոսունք և Պատրիարքունք, որք ընդ իս լծակից եղբարք էք, ՚ի վարել և ցանել զպաշտօն Եկեղեցոյն Բրիստոսի, զիտէք թէ քանի՞ մեծ է պատասխանատուութիւն մեր առաջի մեծ Հովուապետին, զի իրաքանչիւր ոք ՚ի մէնջ՝ զիւր հօտին համարս ունի տալ:

Ողջո՛յն ձեզ, հովիւք որ առաջնորդէք փոքրիկ հօտին Հայոց, և որ արթուն աչօք հսկէք և արածէք զհաւատացեալն Բրիստոս:

սի, յիշելով զքան Տեառն թէ՛ « Հովի քաջ զանձն իւր դնէ 'ի վե-  
րայ ոչխարաց »:

Ողջո՛յն ձեզ, Վարդապետք եկեղեցւոյ, որ ուսուցանէք եւ  
աւետարանէք զքանն Բրիստոսի, « Մխիթարեցէք, մ'իսխարեցէ՛ք  
զժողովուրդն, զի՛ լի եղև տրտմութեամբ, թողեալ լիցին մ'եղջ  
իւր », ասէ Աստուած:

Ողջո՛յն ձեզ, Բահանայք բարձրելոյն Աստուծոյ, որ մատա-  
կարարէք Ս. Խորհրդոց եկեղեցւոյն, դաստիարակք եւ պահպանիչ  
ընտանեկան սրբութեան, եւ գիտէք թէ քանի՛ մեծ է պաշտօն ձեր:

Ողջո՛յն ձեզ, Սարկաւազունք, որ խունկ արկանէք առաջի  
սեղանին Աստուծոյ, եւ մատակարար էք որդոյն եւ աղքատին, յի-  
շեցէք ըզԾաթ Սարկաւազն Մեծէն Ներսէսի, եւ նմանողք եղերուք  
նմա:

Ողջո՛յն ձեզ, Դպի՛րք, որ քաղցրագոյն երգօք շարականաց  
եւ տաղից շարժէք զհոգին ջերմեանդութեան 'ի ժողովուրդն, պաշ-  
տել եւ սիրել վ'Աստուած. դուք՝ զվերին Սրբութեան Դասուցն բե-  
րէք զնմանութիւն:

Ողջո՛յն ձեզ, հարք եւ եղբարք վանական ուխտին, որ պա-  
հապան հրեշտակք էք մնացեալ նշխարաց վանօրէից, որք յաւեր  
ժական պարծանաց յիշատակ են մ'եր նախնի կրօնատր եւ գրա-  
սէր Ս. Հարց:

Ողջո՛յն ձեզ, վարժապետք եւ ուսուցիչք, ձեզ յանձնեալ է  
Ազգային կրթութիւն եւ դաստիարակութիւն մանկանց, 'ի պէս պէս  
ուսմունս եւ գիտութիւնս, որոյ նպատակն է մ'իայն վարել եւ տա-  
նել զմարդիկ 'ի լուսագոյն կեանս, ո՛չ մ'իայն 'ի բարեբաւտիկ վի-  
ճակս աշխարհի այլ եւ վելին Բրիստոսի Արքայութեան:

Ողջո՛յն ձեզ, խմբագիրք Հայոց, որ ձգնիք անդադար աշխա-  
տութիւնս եւ իբրեւ հրապարակախօս մունետիկ գրով եւ թղթով վա-  
րէք զժողովուրդն 'ի յառաջդիմութիւն եւ 'ի քաղաքակրթութիւն, բա-  
նալով զմ'իտս նոցա, ընդունիլ զլանս եւ խորշիլ 'ի շարէն, զգո՛յշ,  
զգոյշ, ջանացէք մ'իշտ 'ի շինել. զի ա՛յս են ձեր սեպուհ պարտիք:

Ողջո՛յն ձեզ, յօրինիչք մատենից, եւ թարգմանիչք գրոց 'ի  
զանազան լեզուաց հեղինակութեանց զորս օգտակար համարէք բա-  
րոյական կրթութեան եւ ձեռնտու արհեստին գիտութեան:

Ողջո՛յն ձեզ, բարերար մ'եկեմնա՛սք, որ Բաջալերելով ըզգը-  
րասէր աշխատատր մշակն՝ 'ի լոյս հանէք զնորա վաստակն՝ եւ  
ընծայէք Ազգին, որ ճոխանան եւ հարստանան աղքատիկ մատե-  
նադարանք Հայոց:

Ողջո՛յն ձեզ, նախանձաւորք Ս. Կրօնի, եկեղեցասէր, ժո-  
ղովրդասէր, բարեպաշտ ոգիք, որ մ'իշտ շինէք զեկեղեցիս եւ զըրպ-  
րոցս, հաստատելով եւ պահելով կրօնի եւ ուսման տաճարս, որով  
լուսատրին որդիք եկեղեցւոյ, եւ ժողովուրդն յորդորի յԱստուած-  
պաշտութիւն, որ քան զամենայն ինչ զօրաւոր է:

Ողջո՛յն ձեզ, ուսանող մանկունք եւ օրիորդք, եղբարք եւ  
քորք, որ ձեռն 'ի ձեռն տուեալ՝ 'ի մ'իասին երթայք եւ գայք 'ի  
կրթութեան տաճարն. բարեբաւտիկ եւ երջանիկ էք, եթէ հաւասար  
կրթութեամբ պատահեալ մ'իմ'իանց ձեռն տայք յաւուր պսակադ-  
րութեան ձերոյ 'ի սուրբ ամիսնութիւն:

Ողջո՛յն ձեզ, մայրաքաղաքացիք եւ գաւառացիք, քաղաքա-  
ցիք, որ պարապիք 'ի ձեռակերտ արուեստս եւ 'ի շահավաճառու-  
թիւնս, որ աշխատիք յառաջ վարել զգործս ձեր իմաստուն տնտե-  
սութեամբ եւ մարտարագիտութեամբ մրցելով եւ զարգանալով ըստ  
պահանջման ժամանակին:

Ողջո՛յն ձեզ, բնակիչք լեռանց եւ դաշտաց, շինական երկ-  
րագործ ժողովուրդք, որ սիրէք զհողն եւ զմսձ, զոչխարն եւ զտը-  
ւարն, դուք՝ աշխարհին բարի եւ անխարդախ վաստակին աշխատա-  
տր մշակն էք, դուք հարազատ որդիք էք նախահօր մ'երում, գոր-  
ծեցէ՛ք զերկիր եւ պահեցէ՛ք, գիտելով թէ մ'իայն երկիրն է ձեր  
կեանք եւ զօրութիւն, մ'իշտ ջանացէ՛ք անկորուստ պահել զայդ 'ի  
հայրենաւանդ ժառանգութիւն:

Յետ ողջունելոյ զամենայն դասակարգն ձեր ժողովուրդ  
Հայոց, դառնամ արդ պատմ'ել ձեզ թէ՛ զինչ արար Տէր ընդ իս,  
եւ գիտէք արդէն զի հոչակեցաւ ընդ ամենայն աշխարհ:

« Ո՛չ որպէս կամ'ին մարդիկ այնպէս առնէ Տէր, այլ որպէս  
ինքն կամ'ի, եւ ո՛չ ոք կարէ հասու լինել անքննին խորհրդոյ նորա-  
զի՝ ո՞ գիտաց զմ'իտս Տեառն եւ ո՞ եղև նմա խորհրդակից թէ խն-  
լամիտ արացէ զնա »:

Մինչ կրտսեր էի 'ի մ'էջ եղբարք՝ եւ արածէի զփոքրիկ հօս

ի լեռնն Վարազայ առ հովանեաւ Բրիստոսի աւագ Սուրբ Նշա-  
նին, Ձեռն Տեառն կալաւ զիս, ած յԵրուսաղէմ, եւ կացոյց ի վե-  
րայ լերին Սիօնի, ուր երեւեցաւ բանն, բժիշկ մարդկութեան՝ եւ  
վերանորոգիչ հնացեալ մարդոյն:

Յերեսուն ամաց անտի միջեւ ցեօթանասուն ամս իբրեւ  
խեցեղէն մի անօթ միշտ վարեալ եւ գլորեալ ընդ քարքարոտ ել  
եւ էջ առաւարս աշխարհի, այնպէս եղէ, զի կարծեցին մարդիկ  
եթէ իսպառ ջախջախեցայ, եւ զի՞նչ էր որ կենդանի պահէր զիս,  
միայն հեզութիւն եւ իսպառ համբերութիւն:

Անդ ՚ի Սիօն մօտ էր նորոգիչ քրուսն Երուս, որ անդրէն  
վերստին նորոգեաց զրկեալ անօթս, միանգամայն եւ երկցս հի-  
ւանդացայ յոյժ, այնպէս թուեցաւ ինձ թէ հասեալ առ Կառ դրանն  
գերեզմանի, եւ եղէ ես իբրեւ զոստայնս մերձ ՚ի հատանել, սիրտ իմ  
եւ շունչ գելաւ յիս, լացի եւ գոչեցի ո՛վ Տէր, դեռ տարածամ է,  
ասացի, դեռ քազմապատիկ պարոս ունիմ առ Քեզ եւ Եկեղեցին,  
թոյլ տո՛ւր, դարձո՛ւ զոգի իմ, զի կեցից եւ վճարեցից»: Ո՛հ, թէ  
մեռանիմ չի մնամ պարտական Բրիստոսի արարող ատենին:

Լուաւ ինձ Տէր եւ ողորմեցաւ, եւ յաւել ինձ նոր կեանս,  
վերացոյց ՚ի լեռնէն Սիօնի, եղ ՚ի Սիօնն Այրարատայ, ի ԿԱՔՈՒ-  
ՂԻԿԷ ԷՋՄԱԾԵԼԻ, եւ ասաց, «Որդի՛ մարդոյ դէտ կացուցի զքեզ ՚ի  
վերայ տանդ Հայոց եւ Հովի՛ւ փարատեալ հօտին Սրբոյն Գրիգորի,  
արա՛ւ քեզ ժամ, ե՛րթ վճարեա զպարտիս քո»:

Խոնարհելով սուաջի երկնից Հօր եւ կամաց նորա եւ մե-  
ծարելով զհամազգային միածայն ընտրութիւնն, արուասիկ գամ ՚ի  
վճարել զմնացորդ եւ զնուիրական պարոս իմ, զոր ունիմ առ եկե-  
ղեցիս եւ առ ժողովուրդս Հայոց, եւ զիտէք թէ քա՛նի շատ բազ-  
մապիսի եւ քազմատեսակ են չափք եւ կշիռ պարտուցս:

Այլ ես, մինչ հասեալ կամ ՚ի ծերութիւն, եւ անցեալ գեօ-  
թանասուն ամս, մինչ ձեռն ՚ի վեր կալեալ այլքն ածին ինձ գօտի,  
եւ կարացից կատարել զանչափ պարոս: Գոնէ փոքրամասն տա-  
ղանդ չափով՝ զոր ինձ առանդեալ է Տէրն եւ պահանջէ շահագոր-  
ծել տոկոսեօք, եւ պարզերես զալ սուաջի պահանջողին:

Մինչ խոկամ, գարնուրիմ, ո՛վ Եկեղեցի Հայաստանեայց, որ  
ընդ ամենայն աշխարհ սփռեալ կաս տարազեալ ՚ի Հայրենի քո

տանէն, չըզիտեմ, թէ որպէս կարեմ՝ վարել զհովուական տեսու-  
թիւն իմ: Միթէ՞ նըստեալ յԱյրարատ մինչ ՚ի Հնդկիս եւս եւ յԵւ-  
րոպ եւ յայլ հեռավայրս, զիա՛րդ կարացից տեսանել զքեզ, եւ  
զիա՛րդ հնար է ինձ ալածել զհօտն սեպհական, որ ընդ ամենայն-  
յաշխարհս ցիր ու ցան կան, անտես աչաց իմից եւ ուր չկարեն  
հասանել ուրք այցելութեան իմոյ:

Այո՛, առաքեցայ ես ՚ի լեռնէն Չիթնեաց, այլ չեմ ազատ  
առաքեալ շրջել ոչ ՚ի հեթանոսս՝ այլ յամենայն եկեղեցիս Հայոց՝  
կենդանի քարքարոպ քարոզել եւ ուսուցանել, աչօք իսկ տեսանել  
զցաւս հօտին իմոյ՝ եւ հոգալ զդարմանն, այլ զի՞նչ իցէ մարդոյն  
դարմանն, իցէ թէ զթած Սամարացին անցանէր զքեւ:

Ուստի մնայ ինձ միայն, որ ըստ սովորութեան օրինի հօ-  
տասէր հովուաց ընդհանրական գրով եւ թղթով խօսել ընդ ձեզ  
ժողովուրդ Հայոց, թէ յերկրի աստ, մինչ չեւ մեռեալ իցեմ, թէ  
յերկինս, ուր հոգիք մեր նախնի սուրբ հարց կան եւ աղօթեն վա-  
սըն ձեր:

Այլ ունիմ ես աչս որ մօտ են եւ տեսանեն զձեզ, նոքա են  
իմ ընտելակից եղբարք, Հովիք եւ Առաջնորդք իրաքանչիւր վի-  
ճակաց, որոց յանձնեալ է ո՛չ յինէն՝ այլ ՚ի Բրիստոսէ, Հովուել  
եւ յանձանձել, պահել եւ հաստատել ՚ի հաւատս Առաքելական Ե-  
կեղեցւոյն Հայաստանեայց, զորոյ հիմն Թաղէոս եւ Բարթոլոմէոս  
Առաքեալքն եղին, եւ զողջ շինուածն, ած ՚ի կատար Սուրբ Լուու-  
տրիչ Գրիգոր:

Գիտէք իսկ, եւ հռչակեցաւ թէ յաւուր հանդիսի օծման  
մերում սուաջի Իջման սեղանի Ս. Տաճարին ուխտեցի հաւատա-  
րիմ մնալ առ այդ հիմն եւ շինուածն Առաքելական Եկեղեցւոյս՝  
Հայաստանեայց, եւ պինդ պահել զաւանդութիւնս մեր նախնի Սուրբ  
Հարց, զգուշանալ եւ չխրամաստել զցանցն Հայրենի:

Եւ դուք իսկ ուխտակից էք ընդ իս, եւ գնոյն ուխտն ունիք  
ի ձեռնադրութենէ շնորհաց, անարատ եւ անաղարտ պահել զկնիքն՝  
որ աւանդեալ է մեզ ՚ի Բրիստոսէ, յԱռաքելոց եւ ՚ի Սրբազան  
Հայրապետաց:

Ուստի կայ եւ մնայ մեզ երկիւղածութեամբ ծառայել առաջի  
Տեառն, զի ունիմք մեք իրաքանչիւր զմե՛ծ պատասխանատուութիւն

ըստ աստիճանի եւ շնորհաց, որ տուեալք են 'ի Հոգւոյն պաշտել զԵկեղեցիս, հոգալ վասն Եկեղեցւոյն, եւ թէ աշխարհի աստ պատրաստի է առաջի մեր Բրիստոսի խաչ, յօժարութեամբ կրել եւ երթալ զհետ զօրագլխոյն, որ ասաց, «շնորհ մեծ է մեզ եթէ սիրով եւ համբերութեամբ կրեսցուք զնոյն խաչ»:

Աղօթեցէք վասն իմ, գործակից հոգեւոր իմ եղբարք, զի գիտէք թէ խաչն իմ՝ ծանրագոյն է, զոր եղ 'ի վերայ թիկանց իմոյ Եկեղեցին Հայաստանեայց, այլ թէ դուք զօրավիգ լինիջիք ինձ, որպիսեօք Սիմէոն Կիրենացին, յայնժամ զօրացեալ 'ի հոգւոյն, քարձեալ զխաչն, սիրով ածեմ 'ի կատար Գողգոթային:

Եւ ես աղօթեմ վասն ձեր, զի եւ դուք զնոյն խաչն համբերատար սիրով քարձեալ երթիջիք զհետ խաչեալ Փրկչին մերոյ, զի անհնարին է մեզ խուսափիլ 'ի խաչէն, քանզի ասաց Յիսուս, «յաշխարհի աստ նեղութիւն ունեցիք», եւ զի՞նչ իցէ նեղութիւն մեր առ նեղութեամբ նահատակ նախնեացն:

Իսկ դո՛ւք, Եկեղեցի եւ ժողովուրդ Հայոց, որ ընտրեցիք զիս Հովիւ ձեզ, ես ապաստան լինիմ՝ աղօթից ձերոց եւ հաւատամ թէ լսէ Տէր ձայնի աղաչանաց ձերոց եւ պահէ զիս վասն սիրելի Եկեղեցւոյն իւրոյ, «կեցից վասն ձեր, եւ դուք վասն Բրիստոսի» Ամէն:

**ՄԿՐՏԻՉ ԿԱՌՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ի 15 Դեկտեմբերի 1893 ամի.

Ըստ Տումարիս, Ռ.Յ


ի Սբ. Էջմիածին, Վարդարշապատ.



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Ց

ՎԱՐԴԱՆ ԲԱԶ. ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ

---



Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

---

ԵՊԱՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՒՆՏԷՊ